



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 5**

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝**

**2016 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. Քննական շրջանի նախապատրաստական աշխատանքները ֆակուլտետում:
2. Ավարտական աշխատանքների կատարման ընթացքը ամբիոններում:
3. 2015-16 ուստարվա 2-րդ կիսամյակի սոցհարցումների արդյունքների քննարկում:
4. Հեռակա ասպիրանտների և հայցորդների ատեստացիա:
5. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտխորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը իր խոսքի սկզբում տեղեկացրեց, որ գիտխորհրդի 25 անդամներից նիստին մասնակցում է 18-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ծանոթացրեց օրակարգի հարցերին, որոնց քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

**1-ին հարցի** առիթով պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանին: Վերջինս հանգամանալից ներկայացրեց ֆակուլտետում քննական շրջանի նախապատրաստական աշխատանքները, կարևորեց բոլոր ամբիոնների բարեխիղճ աշխատանքները (հարցաշարերի ժամանակին տրամադրում, քննական տոմսերի հաստատում ու կնքում, ստուգարքների և քննությունների ժամանակացույցների հաստատում և

այլն): Նա հիշեցրեց, որ ստուգարքները կարող են անցկացվել դեկտեմբերի 23-ից, և ամբիոնների վարիչներին խնդրեց վերահսկել գործընթացները:

**Օրակարգի 2-րդ հարցը** նվիրված էր ֆակուլտետի ամբիոններում ավարտական աշխատանքների կատարման ընթացքին: Այդ առիթով ելույթ ունեցան բոլոր ամբիոնների վարիչները: Նրանք մասնավորապես նկատեցին, որ հիմնականում գոհ են ավարտական աշխատանքների կատարման ընթացքից. չհաշված մանր-մունր թերացումները՝ ամեն ինչ ընթանում է բնական հունով. լավ են աշխատում թե՛ գիտական ղեկավարները և թե՛ ուսանողները:

**Օրակարգի 3-րդ՝** սոցհարցումների արդյունքների առիթով ելույթ ունեցավ պրոֆ. Ավագյանը: Նա մանրամասն ընթերցեց ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի սոցհարցումների արդյունքները և խորհրդի անդամների ուշադրությունը հրավիրեց 4 միավորից ցածր գնահատական ստացած դասախոսների վրա՝ հատուկ շեշտելով, որ զարմանալի մի օրինաչափությամբ այդ գնահատականներին են արժանանում միևնույն դասախոսները: Դեկանը համապատասխան ամբիոնի վարիչներին արդեն որերորդ անգամ հանձնարարեց ի վերջո պարզել նիշերի ցածր լինելու պատճառներն ու խստորեն համապատասխան հետևություններ անել: Նա, հիմնվելով անանուն հարցումների արդյունքների վրա, ավելացրեց, որ ուսանողները հատկապես դժգոհում են հայ գրականության ամբիոնի դոցենտ Սարգիս Մխիթարյանից, ժամանակակից հայոց լեզվի ամբիոնի դոցենտ Բագրատ Ներսիսյանից և հայոց լեզվի պատմության ամբիոնի դոցենտ Գաղթուհի Հանանյանից: Պրոֆ. Ա. Ավագյանն այնուհետև նկատեց, որ անանուն հարցումներում ուսանողները դժգոհում են նաև միջանկյալ քննություններում երբեմն տեղ գտնող արտագրություններից, ամբիոններում տրամադրվող կուրսային ու ավարտական աշխատանքների անարդար բաժանումներից, կենտրոնական գրադարանի աշխատակիցների ընդգծված կոպտություններից, բուժկետերի անտարբերություններից, ֆակուլտետում օտար մարդկանց անընդմեջ ներկայությունից, ընթերցարանի աշխատակցուհու հաճախակի ուշացում-բացակայություններից, օտար լեզուների դասախոսների անեռանդ ու անտարբեր աշխատանքներից, գործնական պարապմունքների սակավությունից և այլ արատավոր երևույթներից: Դեկանն ընդգծեց, որ սրանք չափազանց մտահոգիչ հարցեր են, որոնց բարձրաձայնումները պա-

հանջում են խնդիրների արագ շտկումներ և անհրաժեշտ միջոցների անհապաղ ձեռնարկումներ:

**Օրակարգի 4-րդ`** հեռակա ասպիրանտների և հայցորդների ատեստացիայի առիթով առանձին-առանձին ներս հրավիրվեցին համապատասխան ամբիոնների հեռակա ուսուցման ասպիրանտներն ու հայցորդներ: Վերջիններս ներկայացրին հաշվետու ժամանակահատվածում իրենց կատարած աշխատանքները: Գիտխորհրդի անդամները մասնավորապես

**ԼՍԵՑԻՆ** - հայոց լեզվի ամբիոնի հեռակա ասպիրանտ Լիանա Վարդանի Ալեքսանյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը և դոց. Ա. Սարգսյանը:

Նշվեց, որ Լ. Ալեքսանյանը 2013 թվականին ընդունվել է ասպիրանտուրա (հեռակա ուսուցում): Նրա ատենախոսության թեման է «Դատական խոսույթը հայերենում», ղեկավար` պրոֆ. Յու. Ավետիսյան:

Լ. Ալեքսանյանը հանձնել է փիլիսոփայության քննությունը: Մասնակցել է մի շարք դասընթացների` «Մասնագիտական օտար լեզու», «Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում» և այլն, ավարտել է մասնագիտական պատրաստվածության կրթամասի բոլոր դասընթացները: Ուսումնասիրել է լեզվաբանական և իրավաբանական մեծածավալ գրականություն և ավարտել է աշխատանքի երկու գլուխների շարադրանքը: Տպագրության է պատրաստել երեք գիտական հոդված:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ Լ. Ալեքսանյանին ատեստավորել:

**ԼՍԵՑԻՆ** - հայոց լեզվի ամբիոնի հեռակա ասպիրանտ Արսեն Վրույրի Վարդանյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը և դոց. Լ. Թելյանը:

Նշվեց, որ Արսեն Վարդանյանը 2014 թվականին ընդունվել է ասպիրանտուրա (հեռակա ուսուցում): Նրա ատենախոսության թեման է «Դիմելիքները հայերենում», ղեկավար` պրոֆ. Յու. Ավետիսյան:

Ա. Վարդանյանը 2015-2016 ուստարում մասնակցել է ասպիրանտների համար նախատեսված պարտադիր և կամընտրական բոլոր դասընթացներին՝ «Գիտության փիլիսոփայություն», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Մանկավարժություն», «Հետազոտական աշխատանքի կազմակերպման սկզբունքներ», «Հոգեբանություն» և այլն: Ծանոթացել է տեսական գրականությանը և շարադրում է աշխատանքի առաջին գլուխը: Գրել է երկու հոդված՝ «Դիմելաձևերի որոշ հարցեր հայերենում», «Ածականի ուսուցումը ավագ դպրոցում»:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ատեստավորել Ա. Վարդանյանին:

**ԼՍԵՑԻՆ** – հայոց լեզվի պատմության հեռակա ասպիրանտ Վանուհի Բաղմանյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. Ա. Ավագյանը և դոց. Ն. Դիլբարյանը: Նշվեց, որ ատենախոսության թեման է՝ «Ն. Ադոնցի լեզվաբանական ժառանգությունը», ղեկավար՝ բ. գ. թ., դոց. Ն. Դիլբարյան: Վանուհի Բաղմանյանը մեկ տարվա ընթացքում ունի երկու տպագրված հոդված, ընթացքի մեջ են ևս երկուսը, մասնակցել է մեկ գիտաժողովի: Հանձնել է մասնագիտական որակավորման քննությունը: Erasmus+ ծրագրով հաստատվել է Ադոնցի թողած ժառանգությունն ուսումնասիրելու մշակած հայտը՝ շահել է գործուղում:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաշվի առնելով Վանուհի Բաղմանյանի կատարած աշխատանքը մեկ տարվա ընթացքում՝ ատեստավորել նրան:

**ԼՍԵՑԻՆ** – մանկավարժության ամբիոնի ասպիրանտ /հեռակա ուսուցմամբ/ Աիդա Տիգրանյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ., պրոֆ Ա. Ավագյանը, Ն. Հարությունյանը և դոց. Գ. Բաբայանը:

Նշվեց, որ Աիդա Տիգրանյանն ամբիոնի 3 տարվա ասպիրանտ է: Հաշվետու ժամանակահատվածում հանձնել է որակավորման բոլոր քննությունները՝ բացի մասնագիտությունից, մասնակցել է ասպիրանտուրայի ընտրովի դասընթացներին: Ունի տպագրված 5 հոդված, 1 ձեռնարկ, 2 հոդված հանձնված է տպագրության: Եվս 2 հոդված հանձնել է գիտական ղեկավարին: Ատենախոսության 4 գլուխները պատրաստ են:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքը՝ ատեստավորել ամբիոնի ասպիրանտ Աիդա Տիգրանյանին:

**ԼՍԵՑԻՆ** – մանկավարժության ամբիոնի հայցորդ Սուսաննա Խաչատրյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ., պրոֆ Ա. Ավագյանը, Ն. Հարությունյանը և դոց. Գ. Բաբայանը:

Նշվեց, որ Սուսաննա Խաչատրյանն ամբիոնի 3 տարվա հայցորդ է: Հաշվետու ժամանակահատվածում հանձնել է որակավորման բոլոր քննությունները՝ բացի մասնագիտությունից, մասնակցել է ասպիրանտուրայի ընտրովի դասընթացներին: Գիտահետազոտական պրակտիկա է անցկացրել Շվեյցարիայում: Վարել է սեմինար-պարապմունքներ Սոցիալական մանկավարժություն բաժնի 1-ին կուրսում: 3 հոդված տպագրվել է, ևս մեկ հոդված տրվել է տպագրման:

Ատենախոսության 4 գլուխները պատրաստ են, վերջին 5-րդ գլուխը, կապված սոցիոլոգիական հարցումների հետ, ընթացքի մեջ է: Կազմվել են համապատասխան հարցաթերթիկներ, որոնք քննարկվել են գիտական ղեկավարի հետ:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքը՝ ատեստավորել ամբիոնի հայցորդ Սուսաննա Խաչատրյանին:

**ԼՍԵՑԻՆ** – մանկավարժության ամբիոնի հայցորդ Անի Աբրահամյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ., պրոֆ Ա. Ավագյանը, Ն. Հարությունյանը և դոց. Գ. Բաբայանը:

Նշվեց, որ Անի Աբրահամյանն ամբիոնի 2 տարվա հայցորդ է: Հաշվետու ժամանակահատվածում հանձնել է որակավորման բոլոր քննությունները՝ բացի մասնագիտությունից: Մասնակցել է ասպիրանտուրայի ընտրովի դասընթացներին: Ունի տպագրված 1 հոդված:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքը՝ ատեստավորել ամբիոնի հայցորդ Անի Աբրահամյանին:

**ԼՍԵՑԻՆ** – մանկավարժության ամբիոնի հայցորդ Անահիտ Խլպուզյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ., պրոֆ Ա. Ավագյանը, Ն. Հարությունյանը և դոց. Գ. Բաբայանը:

Նշվեց, որ Անահիտ Խլոպուզյանն ամբիոնի 1 տարվա հայցորդ է: Հաշվետու ժամանակահատվածում հանձնել է ընդհանուր պատրաստվածության կրթամասի բոլոր ստուգաբանները, մասնակցել է ասպիրանտուրայի ընտրովի դասընթացներից 3-ին: 1 հոդված հանձնել է տպագրության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքը՝ ատեստավորել ամբիոնի հայցորդ Անահիտ Խլոպուզյանին:

**ԼՍԵՑԻՆ** – մանկավարժության ամբիոնի հայցորդ Վիկտորիա Բաղդասարյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ., պրոֆ Ա. Ավագյանը, Ն. Հարությունյանը և դոց. Գ. Բաբայանը:

Նշվեց, որ Վիկտորիա Բաղդասարյանն ամբիոնի 1 տարվա հայցորդ է: Հաշվետու ժամանակահատվածում հանձնել է ընդհանուր պատրաստվածության կրթամասի բոլոր ստուգաբանները, մասնակցել է ասպիրանտուրայի ընտրովի դասընթացներից 3-ին: 1 հոդված հանձնել է տպագրության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքը՝ ատեստավորել ամբիոնի հայցորդ Վիկտորիա Բաղդասարյանին:

**ԼՍԵՑԻՆ.**- Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի հեռակա ասպիրանտ Աքելյան Գոհարի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Քալանթարյանը, դոց. Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ Գոհար Աքելյանը գերազանցությամբ հանձնել է մասնագիտական քննությունը: Նա սկսել է շարադրել ատենախոսության առաջին գլուխը: <<Լևոն Խեչոյանի վեպերի ժանրային առանձնահատկությունները>> վերնագրով հոդվածը հանձնել է տպագրության: Այն շուտով կտպագրվի <<Գրականագիտական հանդեսի>> առաջիկա համարում: Այժմ աշխատում է երկրորդ հոդվածի վրա՝ <<Խեչոյանի ստեղծագործությունների ժանրային բազմազանությունը>> թեմայով:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Հաստատել Գոհար Աքելյանի կատարած աշխատանքը և ատեստավորել նրան:

**ԼՍԵՑԻՆ.-** հայ նորագույն գրականության ամբիոնի երրորդ տարվա ասպիրանտ Գոհար Հարությունյանի հաշվետվությունը և ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-** Պրոֆ. պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, դոց. Ս. Գրիգորյանը:

Գոհար Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեման է՝ «Միմոն Միմոնյան. կյանքը և ստեղծագործությունը»: Նա 2016թ. սեպտեմբերին մասնակցել է Գյումրիում կայացած «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 9-րդ միջազգային գիտաժողովին, հանդես եկել զեկուցմամբ: Մասնակցել է պարտադիր և կամրնտրական մի շարք դասընթացների, հանձնել ստուգարքները, ուսումնասիրել է անհրաժեշտ գրականությունը, պատրաստվում է տպագրելու երեք հոդված:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Գոհար Հարությունյանին ատեստավորել:

**ԼՍԵՑԻՆ.-** Ակադ. Հր Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հայցորդ Թամարա Բորիկի Անդրեասյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-** Պրոֆ. պրոֆ. Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը և Ալ. Մակարյանը:

Լսելով և քննարկելով ամբոնի 2015թ. հայցորդ Թամարա Բորիկի Անդրեասյանի հաշվետվությունը(թեմա՝ «Լևոն Բաշալյանը արևմտահայ 80-ականների գրական շարժման համապատկերում», գիտական ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆեսոր՝ Վ. Սաֆարյան)՝ նշեցին, որ հայցորդը կատարել է զգալի աշխատանք թեմային առնչվող նյութերի հավաքման և համակարգման ուղղությամբ, ուսումնասիրել է ժամանակաշրջանի պարբերական մամուլը՝ «Հայրենիք», «Արևելք» օրաթերթերն ու «Մասիս» շաբաթաթերթը: 2016թ. մայիս-հունիս ամիսներին հանձնել է որակավորման քննություններ «Ինֆորմատիկա», «Անգլերեն» առարկաներից: Տպագրության է հանձնել «Միֆոլոգիական և այլաբանական տարրերը Լևոն Բաշալյանի ուշ շրջանի գործերում» վերնագրով հոդվածը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Ատեստավորելու Թամարա Բորիկի Անդրեասյանին:

**Ընթացիկ հարցերում քննարկվեցին.**

ա/ **ԼՍԵՑԻՆ**.- Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի պրոֆեսոր Ժենյա Քալանթարյանի «Քննադատությունն իբրև գործնական գրականագիտություն» ուսումնական ձեռնարկը տպագրության երաշխավորության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը և դոց. Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ Ժ. Քալանթարյանի ուսումնասիրությունը համակողմանիորեն լուսաբանում է քննադատության գործառույթները, նրա դրսևորումները տարբեր դարաշրջաններում: Գրքում ներկայացված են նաև քննադատական տարբեր մեթոդներն ու ուղղությունները ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայ գրականագիտության մեջ:

Հատկապես կարևորվեց քննադատական ժանրերին նվիրված բաժինը, որտեղ ներկայացված են տարբեր ժանրեր և դրանց տարատեսակները: Ուսումնական ձեռնարկը կարող է օգտակար լինել ինչպես ուսանողների, այնպես էլ գրականությամբ զբաղվող լայն շրջանակների համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ**. - Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի պրոֆեսոր Ժենյա Քալանթարյանի «Քննադատությունն իբրև գործնական գրականագիտություն» ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

բ/ **Լ Ս Ե Ց Ի Ն** - Ակադեմիկոս Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբոնի դասախոս բ.գ.դ., դոցենտ Սարգիս Մխիթարյանի «Վիմագրական ու մատենագրական նոր տեղեկություններ Պահլավունյաց տոհմի և Գր. Մագիստրոսի մասին» ուսումնասիրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն** - Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Ալ. Մակարյանը, Վ. Սաֆարյանը:

Նշվեց, որ Ս. Մխիթարյանի «Վիմագրական ու մատենագրական նոր տեղեկություններ Պահլավունյաց տոհմի և Գր. Մագիստրոսի մասին» ուսումնասիրությունը նվիրված է հայագիտական մի ինդրի, որ այսօր բանավեճի նյութ է դարձել: Որոշ գիտական շրջանակներում զարգացվում է մի տեսակետ, որը գալիս է լրջորեն աղճատելու պատկերացումները 11-րդ դ. նշանավոր գիտնական-բանաստեղծ և թղթագիր Գրիգոր Մագիստրոսի ու նրա տոհմի վերաբերյալ: Վիմագրերում և պատմական սկզբնաղբյուրներում նշումներն այն



մասին, թե եղել է Գրիգոր-Ապիրատ Մագիստրոս անվամբ անձ, որը նաև լայն շինարարական աշխատանքներ է իրականացրել Կեչառիսում և այլուր՝ այսինքն Գրիգոր Մագիստրոսին պատկանող կալվածքներում, փաստացի չի հաստատվում և հերքվում է վերջերս Հովհաննավանքում հայտնաբերված մի արձանագրության վճռորոշ տեղեկություններով: Ուստի սույն աշխատանքը գիտական հիմնավորումներով փաստում է, որ երկու, առավել ևս երեք Գրիգոր Մագիստրոսներ գոյություն չեն ունեցել, այլ եղել է մեկը, և նրան են պատկանում իրեն վերագրված շինությունները: Բանասիրական դիտարկումները և հիմնավոր եզրահանգումները թույլ են տալիս աշխատանքը երաշխավորելու տպագրության: Ուսումնասիրությունում մեծ տեղ է տրված Մագիստրոսին վերաբերող կենսագրական իրողություններին: Այնուամենայնիվ, աշխատանքը բանասիրական և վիճագրական հիմնավոր փաստարկումներով և առկա փաստերի համադրությամբ ու տրամաբանական անցումներով հերքում է երկու /երեք/ Գրիգոր Մագիստրոսների գոյության վարկածը: Եվ որքան էլ ցանկացած բանավեճ հնարավորություն է համակողմանիորեն պատկերացնելու խնդիրը, սակայն այս դեպքում ավելի առաջնային է գիտնականի մտահոգությունը. երկու /երեք/ Գրիգոր Մագիստրոսների գոյության մասին անհիմն որոշումը կարող է հետագայում առաջացնել հայ նշանավոր գործչի և հանրագիտակ մտածողի ստեղծագործական ժառանգության տարրալուծման վտանգ: Այս գիտական նպատակադրումն էլ հիմք է տալիս եզրակացնելու, որ աշխատանքն ընթացել է ճիշտ ուղղությամբ և անհրաժեշտ է հրատարակության ներկայացնել:

**Որոշեցին** - ք.գ.դ., դոցենտ Ս. Մխիթարյանի «Վիճագրական ու մատենագրական նոր տեղեկություններ Պահլավունյաց տոհմի և Գր. Մագիստրոսի մասին» ուսումնասիրությունը երաշխավորել տպագրության:

գ/ **ԼՍԵՑԻՆ** – <<Սոցիալական մանկավարժություն>> բուհական ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ.պրոֆ Ա. Ավագյանը, Ն. Հարությունյանը, դոցենտ Գ. Բաբայանը:

Նշվեց, որ կա այս բուհական ձեռնարկի անհրաժեշտությունը: Այն սոցիալական մանկավարժության ոլորտում առաջինն է հայերենով, ընդգրկված նյութը գրված է մատչելի,

գիտական հիմքով. ունի հետաքրքիր կառուցվածք և որպես նորություն բուհական ձեռնարկի վերջում տրված է բառարան:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – <<Սոցիալական մանկավարժություն>> բուհական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

դ/ **ԼՍԵՑԻՆ** – Երևանի պետական համալսարանի և Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի միջև կնքված միջբուհական համագործակցության պայմանագրի շրջանակներում միջբուհական միջազգային հանդես ստեղծելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ն. Հարությունյանը:

Նշվեց, որ հանդեսը նախատեսվում է հրատարակել <<Կրթությունը 21-րդ դարում>> խորագրով, տարին չորս համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ստեղծել <<Կրթությունը 21-րդ դարում>> միջբուհական միջազգային հանդես. հիմնադիրներ՝ ԵՊՀ և ՄՊՄՀ:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ**

**ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**